Ուսումնական նախագծային աշխատանքի պլան

Ուսումնական նախագծի ղեկավար՝ Էվելինա Կնյազյան

Թեմա՝ Հայերենի խոսքի մասերը	
Առարկա(ներ)՝	Հայոց լեզու
Դասարան՝	7-րդ
Ուսումնական նախագծի անվանում՝	«Անտառի տնակում» ռեստորանի ճաշացանկ
Ուսումնական տարի, կիսամյակ	1-ին կիսամյակ
Տևողություն՝	4-6 շաբաթ
Նախատեսված ժամաքանակ	6 ժամ
Տեսակը՝	գործնական թիմային ամփոփիչ
Ձևաչափը՝	ներառարկայական միջառարկայական

Ուսումնական նախագծի նպատակը

Սովորողների մոտ ձևավորել հետազոտություն իրականացնելու և տեղեկություններ հավաքելու հմտություններ: Զարգացնել աշակերտների լեզվական գիտելիքները, հարստացնել բառապաշարը: Ձևավորել թիմային աշխատանքի հմտություններ: Զարգացնել աշակերտների ստեղծագործական հմտությունները: Զարգացնել թվային և մեդիա կարողություններ: Ձևավորել արժեքային համակարգ մայրենի լեզվի նկատմամբ:

Ուսումնական նախագծի վերջնարդյունքները

Հավաքագրած տեղեկությունները վերլուծել, դրանց հիման վրա կազմել բառային աշխատանքը: Ընկալել և ամրապնդել խոսքի մասերի մասին գիտելիքները հայոց լեզվից: Կատարել թիմային, համագործակցային աշխատանք: Ստացած գիտելիքները կիրառել տեքստ կազմելիս: Կազմել գրագետ, հարուստ բառապաշարով տեքստ, հանդես բերել ստեղծագործական մոտեցում: Աշխատել ՏՀՏ գործիքով:

Հիմնախնդիրը կամ մարտահրավերային հարցը

Զարգացնել սովորողների ստեղծագործական ունակությունները՝ օգտագործելով լեզվական գիտելիքները: Արժևորել հայոց լեզվի դերը և կարևորությունը սովորողների մոտ:

Կապը ՀՊՉ առարկայական ծրագրի վերջնարդյունքների հետ

Հ1, Հ14, Հ29, Հ32, Հ34, Հ38

Կարողունակություններ, որոնք կզարգանան այս նախագծի ընթացքում

- ☐ Սովորել սովորելու կարողունակություն
- ☐ Տնտեսական կարողունակություն
- ☐ Լեզվական գրագիտություն և կարողունակություն
- ☐ Մշակութային կարողունակություն
- ☐ Թվային և մեդիա կարողունակություն

Ուսումնական նախագծի նկարագիրը

Սովորողներին տրամադրվում է ծրագրային թեմաներից դուրս բերված հիմնախնդիրների ցանկը: Առաջարկվում է ընտրել դրանցից մեկը: Խմբում կատարում ենք աշխատանքի բաժանում, ըստ նախատեսված առաջադրանքների:

1.Աշխատանք տեղեկատվական աղբյուրների հետ,

3. Կատարված աշխատանքների միջանկյալ քննարկումներ, ուղղորդում:

4. Աիցելություններ արդեն ծանոթ որևէ սննդի հաստատություն կամ էլեկտրոնային էջ, ճաշացանկերի ուսումնասիրում:

5. Ստացված տեղեկատվության ամփոփում, վերլուծություն, նախագծի կազմում:

6. Միջանկյալ քննարկումներ, արդյունքների ներկայացում:

7.Հիմնախնդրի լուծմանն ուղղված գործողությունների ծրագրի առաջարկ /տեսանյութի պատրաստում/:

8. Սահիկաշարի պատրաստում:

Հղում՝ հայկական հեքիաթներ - «Քաջ Նազար», «Զախչախ թագավորը»

Համաշխարհային հեքիաթներ - «Սպիտակաձյունիկն ու յոթ թզուկները», «Կարմիր Գլխարկը», «Հենզելն ու Գրետելը»

[1]Հանրակրթական հիմնական դպրոցի 7–րդ դաս. դասագիրք

Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան, Գ. Մկրտչյան, Լ. Գրիգորյան

«Զանգակ» հրատ. Երևան 2023

2.Էլեկտրոնային հղում՝ https://menu.am/restaurants/ararat-tavern

Միջառարկայական կապեր		
☐ հայոց լեզու	☐ գրականություն	☐ ինֆորմատիկա

Ուսումնական նախագծի արտադրանքի/պրոդուկտի ներկայացման տեսակներ	
☐ Սահիկաշար	☐ Վեբ-կայք ☐ Թիմային ներկայացում

[1]

Հետազոտության աղբյուրներ
Համացանց, այցելություն ռեստորանային կամ արագ սննդի որևէ հաստատություն, հայոց լեզվի դասագիրք, հայ և համաշխարհային հեքիաթներ:
Գնահատում
• Ընթացք - 6 միավոր 1.նախապատրաստական փուլ – 1միավոր 2.բուն ընթացք – 4 միավոր 3.ավարտ կամ ամփոփում – 1 միավոր • Բովանդակություն – 8 միավոր 1. համապատասխանությունը թեմային – 3 միավոր 2. ամբողջականությունը – 2 միավոր 3. հիմնավորվածությունը – 2 միավոր 4. գրագիտությունը – 1 միավոր • Ներկայացումը – 6 միավոր 1.ձևը – 3 միավոր 2.խոսքը – 3 միավոր Վերջնական միավորը փոխարկել 10-միավորային սանդղակի հանապատասխան միավորի: